ления, вместительностью 10 тыс. т., другие современные объекты, благоустроенные дорожные сети, гостиничные хозяйства и т.д.

Подобные условия имеются и в Багаташене, и в Агарак-Мегри, где и в настоящее время проводятся торговые сделки. Такие зоны можно создать в Ашоцке и в Ташире. В этих регионах можно стимулировать, упрощая торговые взаимоотношения. Эти зоны могут служить связующим звеном между Турцией, Грузией, Средней Азией, Ираном, Ближним Востоком и Россией и достаточно эффективно влиять на улучшение торгово-экономического баланса республики.

Ранее мы отметили объем и роль экспорта, как макроэкономический показатель, характеризующий уровень экономической развитости страны. Одновременно этот показатель является барометром конкурентноспособности страны на мировом рынке. Поэтому нами был анализирован объем экспорта в течение последного десятилетия.

Как видно из таблицы, за последние 10 лет имеет место динамичное состояние экспорта. Однако объем экспорта всего лишь удвоился. Так:

- ✓2005г. - 505,2 млн. долл. США,
- ✓2010г. - 1,040,0 млн. долл. США.

Абсолютный объем экспорта как важнейший критерий общего развития страны неоспорим. Опыт многих развитых стран говорит о том, что высокие темпы экспорта /годовой темп роста 25-30% и выше/ обеспечивают стабильное и эффективное развитие страны как залог обеспечения производства высокотехнологичной, качественной, конкурентоспособной продукцией.

Мировой опыт последних 4-х десятилетий высокоразвитых стран (США, Германия, Франция, Англия) и в частности стран, развивающихся быстрыми темпами (Китай, Турция, Вьетнам, Россия, Бразилия), а также теоретические исследования ученых-экономистов Армении показывает, что использование механизма СЭЗ в Армении – это один из важных и эффективных механизмов решения отмеченных задач.

Дальнейшее расширение правительственного решения по внедрению СЭЗ в Армении как по видам СЭЗ, так и по территории, безусловно даст свои положительные результаты.

ՀՀ տնտեսության զարգացման եւ համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու հիմնահարցերը չեն կարող համապատասխան լուծում ստանալ՝ առանց հաշվի առնելու ինչպես ԽՍՀՄ փլուզումից հետո այդ տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական ու տնտեսական նոր իրավիճակը, այնպես էլ աշխարհում ընթացող տարածաշրջանային ու գլոբալ ինտեգրացիոն գործընթացները:

Ինտեգրացիան միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման օբյեկտիվ օրինաչափությունն է: Տնտեսական ինտեգրացիան կարելի է բնութագրել որպես երկու եւ ավելի պետությունների տնտեսական կյանքի ինտերնացիոնալացման այնպիսի ձեւ, որին բնորոշ է երկրների ազգային տնտեսությունների փոխադարձ սերտաճումը, միահյուսումը: Այն ենթադրում է մասնակից երկրների կողմից տնտեսական համաձայնեցված քաղաքականության կիրառում՝ ինչպես միմյանց, այնպես էլ երրորդ երկրների հետ: Ինտեգրացիոն գործընթացի նպատակն է անդամ երկրների սեփական ռեսուրսների, ներուժի միավորումը՝ ինչպես նոր մարտահրավերներին դիմակայելու, համատեղ պայքարելու ու զարգանալու, այնպես էլ գլոբալացմանը առավել արդյունավետ մասնակցելու, գլոբալացման հնարավոր վնասներից խուսափելու նպատակով:

Ինտեգրացիան կարող է լինել երկկողմանի, տարածաշրջանային եւ գլոբալ:

Ներկայում աշխարհում տարածաշրջանային ու գլոբալ ինտեգրման գործընթացները կատարվում են միասին, զուգահեռաբար:

Տարածաշրջանային ինտեգրացիայի հիմնական նպատակներից են ներքին ու արտաքին քաղաքական բարենպաստ պայմանների ստեղծումը, տնտեսության կառուցվածքային փոփոխություններին նպաստելը, տեղական արտադրողներին օժանդակելը:

Տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումները ծագեցին ու սկսեցին տարածվել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Դրա վառ օրինակն է Եվրամիությունը (ԵՄ): Իսկ ներկայում միավորվել ու տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումներ են ստեղծել աշխարհի տարբեր երկրներ՝ անկախ իրենց զարգացման մակարդակից:

Աշխարհատնտեսական առումով ներկայում կարելի է առանձնացնել տարածաշրջանային 3 խոշոր միավորումներ՝ Արեւմտաեվրոպական, Ամերիկա-կարիբյան եւ Ասիա-խաղաղօվկիանոսյան, որոնք էլ կարող են էապես ազդել համաշխարհային տնտեսության զարգացման վրա:

Տարածաշրջանային ինտեգրացիան գլոբալացման հիմքն է, իսկ գլոբալացումը տնտեսական կապերի ինտերնացիոնալացման ավելի բարձր աստիճանն է, երբ ձեւավորվում է աշխարհի ծավալով միասնական շուկան, վերանում են ազգային պետությունների միջեւ գոյություն ունեցող տնտեսական ու ֆինանսական սահմանները, տնտեսությունները դառնում են բաց: Պարզ է, որ խոսք անգամ լինել չէր կարող գլոբալացման մասին, եթե չփլուզվեր ԽՍՀՄ-ը եւ նախկին սոցիալիստական երկրներում չսկսվեին շուկայական վերափոխումները: Հստակ կարելի է ասել, որ գլոբալացումը սերտ կապված է ԽՍՀՄ փլուզման եւ երկբեւեռ (սոցիալիզմ ու կապիտալիզմ) աշխարհի վերափոխման, վարչահրամայական համակարգի վերացման ու բաց շուկայական տնտեսության ստեղծման գործընթացների հետ:

ԽՍՀՄ փլուզումը 20-րդ դարի վերջին տասնամյակում տեղի ունեցած դեզինտեգրացիայի վառ օրինակն է, երբ վերացան երկրների միջեւ երկար տարիներ ձեւավորված տնտեսական սերտ կապերը, դրա հետեւանքները բոլորիս արդեն հայտնի են՝ շրջափակում, տնտեսության անկում, գործազրկություն, աղքատություն եւ այլն: Այսօր արդեն պարզ է, որ տնտեսական աճ եւ վերելք ապահովելու համար մեզ պետք են տնտեսական բազմակողմանի, սերտ ու ինտենսիվ կապեր: Ինտեգրացիան ձեռնտու է բոլոր երկրներին, քանի որ ինտեգրացիայի պայմաններում առավել արդյունավետ են բաշխվում ու օգտա-

գործվում միջոցներն ու ռեսուրսները, ինչն էլ թույլ է տալիս ապահովել բնակչության բարձր կենսամակարդակ: Դրանով են բացատրվում նախկին խորհրդային երկրների ռեինտեգրացիայի ձգտումը, տնտեսական ինտեգրացիոն նոր միավորումների ստեղծումը (ԱՊՀ, Սեւծովյան տնտեսական համագործակցություն, ԳՈՒԱՄ եւ այլն):

Ինտեգրացիոն գործընթացն անցել է զարգացման որոշակի ճանապարհ: Սկզբնական շրջանում այն արտահայտվում էր տարբեր երկրների ազգային տնտեսությունների միջեւ համագործակցությամբ, ինտեգրացիային մասնակցող երկրների միջեւ ապրանքների ու ծառայությունների, կապիտալի, աշխատուժի շարժի արգելքների վերացմամբ, մաքսային միության ստեղծմամբ, այնուհետեւ ընդհանուր շուկայի ձեւավորմամբ ու տնտեսական միության ստեղծմամբ:

Եթե սկզբնական շրջանում ինտեգրացիոն խմբավորման մեջ էին մտնում արդյունաբերապես զարգացած երկրները, ապա ներկայում ինտեգրացիոն խմբավորումների մեջ մտնում են տեխնիկատնտեսական զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրները՝ ստեղծելով բազմաստիճան համակարգեր: Այստեղ լոկոմոտիվի դեր են խաղում զարգացած հզոր երկրները:

Ժամանակակից պայմաններում տարածաշրջանային երկարաժամկետ ինտեգրացիայի հիմնական նպատակը մասնակից երկրների միասնությունն ու սեփական շահերը պաշտպանելն են:

Լիակատար ինտեգրացիայի համար անհրաժեշտ են որոշակի օբյեկտիվ պայմաններ՝ զարգացած շուկայական տնտեսության առկայություն, տնտեսության բացություն, ազգային տնտեսությունների փոխադարձ կախվածություն, իրավական երկրի, զարգացած ժողովրդավարության առկայություն:

20-րդ դարի երկրորդ կեսերից եվրոպական տարածաշրջանում տնտեսական ինտեգրացիայի բուռն զարգացումը պայմանավորված է այդ տարածքում երկրների տնտեսական արագ զարգացմամբ:

Դեռեւս 17-18-րդ դարերի արդյունաբերական հեղաշրջումը, ինչպես նաեւ առեւտրային կապերի զարգացումը, պատմաաշխարհագրական գործոնները, տրանսպորտային ճյուղավորված ցանցի, տնտեսական ու քաղաքական բարենպաստ պայմանների, ազգային, կրոնական եւ մի շարք այլ պայմանների առկայությունն արդեն իսկ նախապայմաններ ստեղծեցին արեւմտաեվրոպական տարածաշրջանային ինտեգրացիայի կայացման համար: Հենց դրանով է բացատրվում, որ 20-րդ դարի կեսերից Արեւմտյան Եվրոպան դարձավ միջազգային ինտեգրացիոն գործընթացների բնօրրանը:

ԵՄ-ն այսօր հզոր ուժ է աշխարհում, եւ սա նշանակում է, որ գլոբալ մրցակցության պայմաններում որպես ԱՄՆ-ի մրցակից հանդես է գալիս ոչ թե առանձին երկիրը, որը չի կարող դիմակայել նման մրցակցությունը, այլ երկրների խումբը:

ԵՄ ինտեգրացիոն գործընթացին մասնակցում են եւ՛ հզոր, եւ՛ թույլ երկրները: Հարեւան համեմատաբար թույլ երկրներին այդ խմբավորման մեջ ներառելու հիմնական նպատակն է այդ երկրներին օժանդակելը, աջակցելը, որի շնորհիվ այդ երկրները ոտքի են կանգնում եւ գտնում իրենց տեղը նոր համաշխարհային տնտեսության մեջ: Պարզ է մի բան, որ ի տարբերություն գլոբալացման, տարածաշրջանային ինտեգրացիան, օժանդակելով ետամնաց երկրներին, դրանց բնակչության համար ապահովելով բարձր կենսամակարդակ՝ դրանով իսկ մեծապես նպաստում է ողջ տարածաշրջանի զարգացմանը:

Հայտնի է, որ ԵՄ-ն միատարր չէ. դրա կազմի մեջ մտնող պետությունները տարբերվում են տնտեսական ներուժով, զարգացման մակարդակով: Արեւմտյան ԵՄ-ն կամ ԵՄ-15-ը զարգացման մակարդակով զգալի բարձր է ԵՄ-ին 2005թ. մայիսին միացած 10 երկրներից, իսկ 2007թ. հունվարի 1-ից ԵՄ կազմի մեջ մտան նաեւ Բուլղարիան եւ Ռումինիան:

Ներկայում ԵՄ ու եվրոյի գոտու պարտքը մեծ խնդիր է դարձել ԵՄ երկրների համար: Այդ է պատճառը, որ ԵՄ-ի ապագայի վերաբերյալ հնչում են տարաբնույթ կարծիքներ: Որոշ հեղինակների կարծիքով՝ եթե ԵՄ առաջատար արդյունաբերական երկրները, մասնավորապես՝ Գերմանիան, չգտնեն արդի ֆինանսական ճգնաժամի ճիշտ լուծման ուղիները, չվճարեն մյուսների պարտքերը, ապա ԵՄ-ին կսպառնա սնանկացումը: Կարծում ենք՝ ԵՄ-ին պատուհասած ֆինանսական ճգնաժամի հաղթահարման նպատակով ԵՄ հզոր երկրները պետք է գիտակցեն, որ ԵՄ միասնությունը ամենագլխավորն է, եւ էլ ավելի խորացնեն ինտեգրացիան, մարեն պարտքերը, հակառակ դեպքում ԵՄ-ին կսպառնա փլուզումը:

Այժմ ԵՄ-ին ցանկանում է միանալ Թուրքիան, որի անդամակցությունից հետո ԵՄ տարածքը եւ բնակչությունը կավելանան զգալիորեն, սակայն ԵՄ-ում էապես կնվազի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն:

Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին ունի եւ՛ դրական, եւ՛ բացասական կողմեր: Դրական կողմերից կարելի է առանձնացնել այն, որ Թուրքիան կարող է էապես ազդել իսլամական այլ պետությունների վրա՝ եվրոպական արժեքներն ընդունելու հարցում: Միաժամանակ՝ Թուրքիան կարող է կարգավորիչ դեր խաղալ տարածաշրջանում՝ որպես ՆԱՏՕ-ի անդամ երկիր: Թուրքիան կարող է հանդես գալ որպես Եվրոպան եւ Արեւելքը կապող օղակ, իսկ որ ամենագլխավորն է՝ անդամակցության արդյունքում զգալի կբարձրանա բնակչության կենսամակարդակը:

Սակայն արդեն իսկ ակնհայտ են այն բացասական հետեւանքները, որին կարող է հանգեցնել Թուրքիայի անդամակցությունը, դրա համար էլ ԵՄ-ն Թուրքիային առաջարկում է տնտեսական եւ քաղաքական փոխհամագործակցություն, կոոպերացիայի ծրագիր՝ առանց անդամակցության: Դա հասկանալի է, քանի որ Թուրքիան ոչ աշխարհագրական եւ ոչ էլ

**ՀՏԴ 339 : 338 (479.25)**

# ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՀՀ-Ն

***Ռուզաննա ԱՐՄԵՆԱԿՅԱՆ***
***ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու***



մշակութային առումով եվրոպական երկիր չէ: Էապես տարբերվում են քրիստոնյաների եւ իսլամ դավանողների բարքերը, մտածելակերպը, ավանդույթները եւ այլն: Թուրքիայում անելիքներ կան՝ արդարադատության, ոստիկանության, խոսքի ազատության, ազգային փոքրամասնությունների շահերի պաշտպանության, կանանց ու տղամարդկանց իրավունքների հավասարության եւ այլ ոլորտներում: Թուրքիան իր տնտեսական հզորությամբ ու զարգացման մակարդակով չի համապատասխանում ԵՄ երկրներին:

ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունը կարող է բացասաբար ազդել աշխատանքի շուկայի վրա (հատկապես՝ ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամից հետո), կստեղծվի քաոսային իրավիճակ, բացի այդ՝ կկրճատվեն առանձին անդամ պետությունների օգնությունները:

Տնտեսական իրավիճակը բարվոք չէ ԵՄ մի շարք երկրներում: Դեֆոլտի եզրին հայտնված Հունաստանին սպառնում է անխուսափելի սնանկացումը, եւ չի բացառվում եվրագոտուց նրա դուրս գալը: Հունաստանի նոր ձեւավորված կառավարությունը ձգտում է հավանության արժանացնել Եվրոպայի օգնության ծրագիրը: Դժվար կացության մեջ են հայտվել նաեւ Իսպանիան, Պորտուգալիան, Իտալիան:

Ինչ վերաբերում է ԵՄ եւ ՀՀ միջեւ ինտեգրացիոն կապերին, Հայաստանը 1998թ. ստորագրված՝ «Եվրոպա-Կովկաս-Ասիա» (ՏՐԱՍԵԿԱ) միջազգային տրանսպորտային միջանցքի զարգացման համաձայնագրի հիմնադիր երկրներից մեկն է: ՀՀ ստորագրել է նաեւ մի շարք համաձայնագրեր, մասնավորապես՝ «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի մասին պայմանագիրը, Տրանսասիական երկաթուղային ցանցի մասին համաձայնագիրը, Տրանսեվրոպական մայրուղային ցանցի մասին համաձայնագիրը, Գլխավոր միջազգային ավտոմայրուղիների մասին Եվրոպական համաձայնագիրը եւ բազմաթիվ այլ համաձայնագրեր:

ԵՄ-ի եւ ՀՀ-ի միջեւ ինտեգրացիոն գործընթացի քայլ կարելի է համարել ՀՀ-ի ներգրավումը «Ընդլայնված Եվրոպա՝ նոր հարեւաններ» ծրագրում, իսկ ներկայում էլ՝ «Անդրսահմանային երկրների համագործակցության» ծրագրում: Դրանցով ԵՄ-ը ցանկանում է բարիդրացիական հարաբերություններ հաստատել այն երկրների հետ, որոնք կարող են սահմանակից դառնալ ԵՄ-ին՝ նրա հետագա ընդլայնման արդյունքում: Իսկ ՀՀ-ն ԵՄ-ին սահմանակից կդառնա միմիայն Թուրքիայի անդամակցությունից հետո: Այնպես որ՝ Թուրքիայի անդամակցությունը ձեռնտու է նաեւ Հայաստանին:

ՀՀ զարգացման հեռանկարները զգալի կախված են այն բանից, թե կկարողանա արդյոք ՀՀ-ն ռացիոնալ օգտագործել իր աշխարհաքաղաքական դիրքը, դառնալ տրանսպորտային միջանցք Արեւմուտք-Արեւելքի, Հյուսիս-Հարավի համար: ՀՀ-ն էապես կշահի, եթե ասիական երկրներից դեպի Եվրոպա կառուցվելիք էներգետիկ խողովակաշարերն անցնեն Հայաստանի տարածքով, ինչպես նաեւ եթե ԵՄ եւ ԱՊՀ երկրների շրջանակներում ստեղծվի հաղորդակցման ուղիների միասնական ծրագիր, եւ Հայաստանն ընգրկվի այդ ծրագրում:

Armenia of geographical status has the most improper situation among the other tow contries of Caucasus region (Azarbijan and Georgia) and considering to the present problems among its three neighbors (Azarbijan, Georgia and Turkish), Iran strand in fact is its vital path. Armenia of scope, population and common boundary length with Iran is very small so thanks to its limiting in land, blockage by offensive countries, having different religion with region countries and also ample immigrants in Iran and other places of the world is so important to Iran. Islamic republic of Iran has a relationship with all three Republics of Caucasus and based on its foreign policy wants to improve its relations with other region countries but at in question region among Caucasus republics some developing factors have caused the more important Armenia. Some trans-regional factors influenced on developing of Iran with Armenia. In current articles attempted to verify these causes and factors, structure changes in international system including Soviet ruin and the ending of cold war, the changes of tow-polar system in the world and its balancing, communism failure and other factors of creating the independent countries from Soviet and concentrating of regional and trans-regional countries on these countries for their natural and oil resources and also lack of sufficient development of these countries from technology and economic aspects and …, caused these regional and trans-regional countries for ravening these resources come to these regions and many of such factors were effective in expanding the interactions between Iran and Armenia.

In present process of globalization, which has begun from word war II, developing of foreign trade has a special position. Endorsement the public agreements for tariff and trade and converting these institutions to global trade organization over the time can imply to the importance of these organizations in creating the free trade and economic dependence of countries to each others and globalization of economics. To days global markets links goods, and increasingly services, countries, regions, cities, organizations and people in a point which as a exchanging the national products to each other, is so upper than trade notion. Quantitative and qualitative increment of trade at global level is one of the basic important and evident indexes of economical globalization. This index that is as old as economic globalization, incurred the primary and basic part of this process. In other words international commerce consider as a first aspect and the symbol of economic globalization which its history backs to middle of 19th century. In economic globalization era, trade has voided of traditional and limiting figure and in new formats including the management of global commercial organization on global trade and regional advent along with other economic phenomenon continuous to its improvement. Armenia with geopolitics problems severely needs to fuel material, Iran commodities and Iran strand for export and import and also Iran boundary for access of this country to free waters has found an exceptional mood. Proper utilization of this opportunity and owning Armenia markets as a long term and permanent esteem and not short term and transient one, can consider as a supplier of profits for Islamic Republic of Iran. Armenia however of scope point, population and common boundary length with Iran is so small and yet among the elites and our people is formed a minor cognition sensitivity towards it, but the fact is that, this neighbor of Iran has a significant importance for Iran which obligate the necessity of providing the foreign policy and complex relationship based on its importance with considering to national profits. So cognition and addressing the national profits of Iran in Armenia are the most immediate preliminaries for preparation of foreign policy which implied shortly.

*Armenia, alternative path for relation of Iran with Europe:* Over the past years, Iraq path thanks to the occurrence of Iran and Iraq war and Caucasus path thanks to the ex-Soviet approaches on Iran was closed and Turkish was converted to the only relational strand of Iran with Europe. This point knowingly the present limits, result in Turkish impacts on Iran and also Iran couldn't do counter measures. With dependence of Armenia and Georgia and presenting relative security in achieving Iran boundary to Black sea, this path can be a proper alternative for implied path. Since 1996, by construction of stable bridge on Aras river in Magry, the relation between tow countries is provided so for wide utilization and for goods and passengers transporting it is necessary to build another bridge on Aras and a 25-kilometers tunnel of Gajeran for passing of small impassable Caucasus cervix and also Armenia and Georgia roads also need to main widening and reconstruction. But all of these measures were cost effective and would have important political, geopolitics and economic effects for Islamic Republic of Iran.

*Iran, reliance point for Armenia:* After the Soviet ruin and depend-